Ս-ՐԲ ԼՐՈՒԱՆԻՆ ԽՈՂԽՈՅԻ ԱՂՔԻՆՆ ՎԵՐԾԱՊՈՒՆԸ, ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ։

Ազգի մի բարօրութեան և երջանիկ ու հանգիստ կեցութեան անհրաժեշտ պէտքն որքան որ ուսմանց և գիտութեանց ծաւալին ու ընդհանրանալն է ազգին մէջ, սակայն ոչ նուազ քան զայն՝ իրր անմիջական կարիք կենաց բարեկեցութեան՝ գործական արհեստից ամէն վիճակի մարդկանց մէջ մրցելն ալ կարեւորագոյն համարուած է։ Տղայ մի՝ թէ մանչ և թէ աղջիկ ուսումն ու գիտութիւն ստացած ժամանակ միանգամայն և գործական արհեստի մի պարապելը, նոյն գիտութիւններն արդիւնաւորել լսել է։ Այն ճշմարտութիւնս մեր ազգն շատոնց ի վեր ըմբռնած է, և աշխատած եւս է գոնէ ազգային երեւելի վարժատանց մէջ արհեստանոց մի եւս հաստատել. և տեսական գիտութեց հետ քանի մի կարեւորագոյն արհեստներ եւս աշակերտաց ուսուցանել։ Անոնց տղայոց համար սոյն խորհրդիս գործադրութիւնը միշտ ցայսօր դիւրարացած է, որոց յայտնի պատճառներն հարկ չէ ասել։ Խարեբազդաբար աղջկանց վարժարաններու մէջ իրենց սեռին վերաբերեալ արհեստներու ուսմունքը այնքան դիւրացած է, միշտ որ և է քաղաքի օրիորդաց վարժատանց մէջ մտաւորական ուսման հետ արհեստի այսինքն ասղնագործութեան դասատու մի վարպետը՝ դրեթէ յանցանք համարուելու չափ զանցառութիւն մի է։ Գիտութիւնք և ուսմունք թէպէտև անհրաժարելի պէտք են երկու սեռի տղայոց, բայց իգական սեռի տրուած թատրական ուսմունքներն և իրենց դպրոցի մէջ երկար ընկալեալ կենալու հարկը արդէն եղած են որ ընդունած ուսմունքներն չեն կարող իրենց ապագայն ապահովել, որքան որ ձեռագործական արհեստներն կարող են նոցը ընել։ Այսիկայ ապացուցանելու հարկ չկայ։

Այն անհերքելի ճշմարտութիւնն լաւ ըմբռնած ըլլալով Ամէն. Արբազան Պատրիարքն, անցեալ դեկտեմբեր ամսոյն Օմիւռնիայէն բերել տուաւ որպէս կեշտատուն օրիորդ Վառվառէ Ակոպեանը, որ յիշեալ քաղաքին մէջ եւս վեց տարիէն ի վեր ասղնագործութեան վարժուհի կարգած էր։ Յիշեալ օրիորդն գալէն ի վեր արդարեւ հոգի ու կենդանութիւն տուաւ քաղաքիս աղջկանց դպրոցին, ուր մինչև յայն օր տրուած ուսմունքն էին լոկ հայկական լեզուի մշակութիւն։ Լոկ ձեռագործական արհեստից վարժութիւնն սկսելուն ոչ միայն աշակերտուհեաց թիւը բազմապատկեցաւ, այլ և մահմետական ընտանիք լսելով և ականատես լինելով եղած մեծ յառաջդիմութեան զանազան տեսակ ասղնագործութեան մէջ, գովելի նախանձութեամբ մի սկսան իրենց նորահաս աղջկունքն եւս իրկել, և հիմայ մի քանի իսլամուհիք կը յաճախեն վարժարանը ի մեծ գոհութիւն իրենց ծնողաց և ի պարծանս Ազգիս։

Աշակերտուհեաց միշտ ցայսօր աշխատած ձեռակերտական արդիւնքներն որ 250 կուսի կը հասնին զանազան ցեղագանելիքներ և կանացի զարդեր, արժան դատուեցաւ զանոնք վաճառահանութեան դնել, ինչպէս տարբեր են ընել բոլոր Ազգային վարժարանները։ Հետեւապէս հաստատեալ հաստատակ տարբերութեամբ հանեց Ս. Աթոռոյս Ազգային խորհուրդը, իւրաքանչիւր տոմսակ 10 դահեկանի. և այս հաղար թիւին մէկ քառորդն այսինքն 250 թիւերը պիտի տուան մէկ կամ երկու կուսի յիշեալ արդիւնքներ-

digitised by A.R.A.R.@

բէն։ Հազար տումանակին 400 ը արդէն Եգիպտոսէ ուղուած բլալով՝ հոն իրը-կուեցաւ. 100 տումանակ ի Պոլիս Երուսաղէմառուն, ուր փասիաքոշ ազգայ-ինք կրնան ստորագրիլ. մնացեալն հոս սուրբ քաղաքիս մէջ պիտի ծախուին։ Վիճակահանութեան օրն է մարտի... աղջկանց վարժատան մէջ։ Մինչեւ այն օրը պէտք է որ Եգիպտոս և ի Կ. պոլիս ծախուած թիւերուն ցուցակը հասնի ի Սուրբ Քաղաս։

Յոյս ունիմք որ եկող տարուան հա-մար աւելի բազմաթիւ եւ աւելի ընտիր տեսակներ վիճակահանութեան բաղդն պիտի ունենամք. ուսկէ եղած դրամական արդիւնքն դարձեալ նոյն վարժատան աւելի յառաջադիմութիւն համար հարկաւոր ծախուցը պիտի ի գործ ածուի։

ԿՐՕՆԱԿԱՆՔ

ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Շարունակութիւն և վերջ. տես թիւ 11)։

ԳԼՈՒԽ Ի Ե.

թէ Հրեայք անմոքաբար կը յանդիմանէն Հրիւ-գոնէից սաղմոսերգուին։

Տէր իմ. Աստուած մեզ համար ը-սաց. «Գնեմ իմ աջս ամենց վերայ ի շարիս և ոչ ի բարիս». ինչպէս յայտ-նապէս կը տեսնեմք մինչեւ ցայսօր հա-զար տարի է։ Եւ այս սաղմոսող որ-դւոյ համար ըսաց Դաւթի բերանով. «Ամէն հեթանոսներ ծափ զարկէք, և սաղմոս ըսեցէք օրհնութիւն ձայնով» (1)։ Եւ ուրիշ տեղ կ'ըսէ. «Աղաղակեցէք դէպ առ Աստուած ամէն երկիր. սիրով ծառայեցէք ուրախութեամբ. մը-տէք նորա դիմաց ցնծութեամբ». և կԶ Սաղմոսին մէջ. «Սաղմոս ըսեցէք Տէրոջ ամէն երկիր, և օր աւուր աւե-տիս տուէք» (1)։

Կը գողամ, Տէր իմ, Երեմիայի բե-բանով Աստուծոյ ըսածներուն վերայ Թ. գլխոյն մէջ. «Ուսուցէք ձեր որդւոց և աղջկանց կոծ և ողբ. վասն զի ձեր դրա-ներէն մահ եկաւ» (2)։ Դարձեալ՝ որդւոց, այսինքն սաղմոսողաց համար Աստուծոյ ըսածներուն վերայ կը գողամ, զոր Դաւ-թի բերանով ՃԽԸ սաղմոսին մէջ. «Երկ-րի թագաւորներ և բոլոր ժողովուրդք, իշխանք և երկրի բոլոր դատաւորներ, երիտասարդք և կուսանքներ, քահա-նայք տղայոց հետ Տէրոջ անունն օրհ-նեն»։ Եւ ԽԹ. սաղմոսին մէջ. «Երգ-երուն զոհովը զիս փառաւորէ» (3). որպէս թէ յայտնապէս ըսելու ըլլար՝ ոչ թէ նոխազաց մատուցն զոհովը, ինչ-պէս է մեր զոհը.... (4)։

Երբ այս ամենը կը մտածեմ, կ'ե-բեւի ինձ թէ՝ օրհնութեան զոհը եւ Աստուծոյ եկեղեցւոյն մէջ երգերով մէկտեղ մատուցուած զոհն արհամար-հելիցիս՝ կը մոլորիմք. մանաւանդ Աս-տուծոյ օրինաց մէջ ասոր համար պա-տուէրներ և օրինակներ կը գտնեմ՝ զոր Դաւիթ տուաւ ըսելով. «Օրհնեցէք զանիկայ քնարով ու (երաժշտական) գործիքներով. օրհնեցէք զանիկայ մեծ ծնծղաներով. և ամէն շունչ օրհնեցէք

---

(1) Դարձ հարէք ամենայն հեթանոսք. սաղ-ղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Սաղմ. խԶ. 1.

(1) Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր. սաղմոս ասացէք անուան նորա. և տուք զփառս օրհ-նութեան նորա։ Սաղմ. կԵ. 1։

(2) Ուսուցէք դստերաց ձերոց ձայնս. և կին ընկերի իւրում զողս. զի եկ մահ ընդ պատուհանս ձեր։ Երեմ. Թ. 20։

(3) Պատարագ օրհնութեան փառաւորէ զիս։ Սաղմ. խԹ. 23։

(4) Հոս Եւսեբիոս մարգարէութիւնն վիպաս-թիւն կը բերէ. որոյ խմաստը շփոթ և խառն ընե-լով զանց բրինք մէջ բերել. որոյ թարգմանութիւնն հոս բնագրին մէջ է։ Ս։